

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ
(համեմատական լեզուաբանական)

Մ. Հ. ՓՈԼԱՂՅԱՆ

Գործողությունը, որպես հասկացություն, լինի ֆրանսիական քերականության մեջ թե հայկականի, ուսումնասիրվում է քերականական երկու տարբեր բնագավառներում՝ շարահյուսության ե ձևաբանության մեջ (բայի սեռը)։ Եվ ինչպես պատահում է այդպիսի դեպքերում, երևան են դալիս մի շարք հակասություններ, քանզի քերականական սահմաններից և նկատի առնել երևույթներ, որոնք կապված են խոսքի գրության հետ (խոսքի համատեքստը), խոսող անձի տարբեր ստրատեգիաների հետ։ Ինչպես համատեղել ձևական քերականությունը (շարահյուսությունը քննարկում է միմյանից առարկայի դիրքը նախադասության մեջ) և մի իմաստաբանական կատեգորիա, ինչպիսին է գործողությունը, ըստ որի՝ գործող անձը կարող է մյուս գործող անձանց հանդեպ մտնել իր ընտրած գերի մեջ՝ առանց փոխելու շարահյուսական առարկայի դիրքը։ օրինակի համար, լինել ենթակա և գործողությունը չկատարել։ Մի խոսքով, ինչպես խոսափել այն անթիվ հակասություններից, որ կան քերականության դասագրքերի մեջ։

Նախ վերցնենք, ֆրանսերենի դասագրքերի Ենթական, — ինչպես գրում են մի շարք լավագույն դասագրքեր, որոնք համենայն դեպս փորձում են հաղթահարել վերոհիշյալ դժվարությունները, — այն առարկան է «որի մասին խոսում են» (ce dont on parle)։ Սակայն ինչպես բացատրել, որ այդ նույն առարկան երբեմն գործողություն կատարող անձն է, իսկ երբեմն գործողությունը կրողը։ Քերականության դասագրքերը այս խնդիրը չեն պարզաբանում։ Օրինակ՝ *Marie s'est laissée séduire* (Մարիային վերջապես գալթակեցին) նախադասության մեջ խոսքը վերաբերում է Մարիային, բայց Մարիան գործողությունը կատարող անձը չէ։ Հետաքրքիրն այն է, որ հայերեն թարգմանությունը վերականգնում է տրամաբանական կառուցվածքը։ Մարիան այստեղ ուղիղ խնդրի դիրքում է, չնայած այն հանդամանին, որ խոսքը իր՝ Մարիայի մասին է։ Ֆրանսերենի կառուցվածքի մեջ իսկական կատարող անձը ղեղաված է, երևույթ, որ անկասկած կապված է խոսող անձի տեսակետի հետ։ Իսկ ինչպե՞ս դասակարգել նախադասության մեջ առաջ անդամները՝ ելնելով վերոհիշյալ բնորոշումից (առարկա, որի մասին խոսում են...)։ Դժբախտաբար, այս հակասություններն միայն ֆրանսերենին չեն վերաբերում։

Այժմ վերցնենք հայերենի քերականության մի քանի դասագրքեր։ Ս. Արարահյանը «Ժամանակակից հայերենի քերականություն» մեջ² ենթակայի բնորոշումը քննարկելու համար նշում է հետևյալ նախադասությունները՝

Արամը կարդում է։

Տեղեր դեղին է։

Սա գրիչ է։

¹ Bonnard. *Code du français courant*, Paris, 1994, p. 22—23.

² Ս. Դ. Արարահյան, *Ժամանակակից հայերենի քերականություն*, Ե., 1975, էջ 273—278.

Շենքը կառուցվել է երկրորդ շինվարչության կողմից:

Նա ունի երեք երեխա:

Առարկա անվանող բառը կոչվում է ղոյական:

«Այս բոլոր նախադասությունների ենթականերից,—գրում է քերականագետը,—այսպես ասած, տրամաբանորեն ակտիվ է առաջինը, որը գործող սուբյեկտ է: Մյուս նախադասությունների ենթակաները պարզապես հատկանիշի կրող են, կամ ավելին՝ ուրիշի կատարած գործողությունը իրենց վրա կրող առարկա (4-րդ օրինակ): Ենթակայի տրամաբանական սահմանման ղեկավարում անհասկանալի է մնում, թե ինչու ենթական «շինվարչության կողմից»-ը չէ, այսինքն, գործողության իսկական տերը, կատարողը: Այստեղ (ե ոչ միայն այստեղ) ենթակայի հարցը «կողմ առարկա» անվանումով չի կարելի լուծել, քանի որ ներգործական կառուցվածքի նախադասության կրող խնդիրը այնպիսի հաջողությամբ կարելի է համարել «եղող առարկա», ինչպեսի «հաջողություններ» կրավորական կառուցվածքի ենթական: Շարունակենք փնթր բերված օրինակների քննությունը: 5-րդ և 6-րդ օրինակների ենթակաները ոչ գործողություն կատարող են, ոչ եղող առարկա: Հապա ո՞րն է այն ընդհանուր ու բնորոշ հատկանիշը, որ ունեն բերված նախադասությունների բոլոր ենթակաները և առհասարակ ենթական, որպես նախադասության անդամ: Եվ ահա քերականագետի առաջարկած բնորոշումը. «Ենթական նախադասության այն անդամն է, որին ստորոգումով վերագրվում է որևէ հատկանիշ»³:

Հարց է ծագում՝ ո՞ր հատկանիշն է ստորոգվում Արամին (առաջին նախադասություն), նրա «կարողացող լինելը», եթե կարելի է այդպես արտահայտվել: Ճիշտ է, որ գործողություն նշանակող բայերն իրենց իմաստաբանական կազմության մեջ ցույց են տալիս ինչ-որ հատկանիշ, ավելի ճիշտ հատկանիշներ, սակայն այս վերջինները գլխավոր իմաստին զուգորդում են գործողություն: Գուցե գլխավոր հակասությունը՝ Ս. Աբրահամյանը ավելացնում է. «հատկանիշ, տվյալ դեպքում պետք է նկատի ունենալ լայն իմաստով...»:

Այնուհետև, քերականագետը տալիս է ստորոգյալի բնորոշումը. «ստորոգյալը բայական դիմությանմբ ձևավորված անդամ է, որով հատկանիշը վերագրվում է ենթակային»:

Բայց հետաքրքիր է, այդ դեպքում ինչպե՞ս պիտի բնորոշվի ուղիղ խոնդիրը: Եվ կարգում են հետևյալը. «խնդիրները բայական անդամի այն լրացումներն են, որոնք ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաներ կամ որպես առարկա մտածվող երևույթներ, հատկանիշներ»: Ուրեմն, մի կողմից ձևական քերականությունը փրկելու համար, հրաժարվում են գործողություն կատարողից, իսկ մյուս կողմից, ստիպված վերադառնում են ինչու կատարողից, երբ պետք է խնդիրը բնորոշել:

Մ. Ասատրյանը մնում է ձևական քերականության սահմաններում. «Լինելով շարահյուսական կարգ՝ ենթական պետք է բնորոշվի հենց շարահյուսորեն, այն է՝ ստորոգյալի հետ ունեցած հարաբերության տեսակետից»: Եվ կարգում ենք հետևյալ բնորոշումը՝ «Ենթական ցույց է տալիս այն առարկան, որին բայի դիմավոր ձևով վերագրվում է հատկանիշ»⁴: Իսկ «Ստորոգյալը նախադասության այն գլխավոր անդամն է, որն արտահայտում է ենթակայի հատկանիշը... խնդիրները ցույց են տալիս ենթակայի գործողության հետ կապված, գործողության մասնակցող առարկաներ»: Ինչպես ասում են, ըջում ես դռնից, վերադառնում է պատուհանով:

«Եղվաբանական բառարանը» կրկնում է վերոհիշյալ բնորոշումները, բայց ավելացնում Մ. Սալյանի ղայանի դասակարգումը՝ «ենթակա գործողու-

³ Նույն տեղում, էջ 276:

⁴ Մ. Կ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1987, էջ 153—155:

թյուն», և «ենթակա կրելություն»⁵, որն ըստ մեզ, համենայն դեպս, անկեղծ մոտեցում է՝ կա հակասություն, որ պետք է հաշվի առնել: Մոտավորապես նույն կառուցվածքն է նաև Աբեղյանը:

«Ենթակա ասում են ուրեմն, այն լրացումները, որոնք բացահայտում են բայի դեմքը. որոշ կերպով ցույց տալով անող կամ եղող առարկան, ոոհն վերագրվում է բույ՝ մաս: Եր կամ մի հատկանիշը»⁶: Իսկույն նկատում ես մի նոր կետ. Աբեղյանի համար ենթական «լրացում» է՝ կախված է սառ-րոգյալից (բայից):

Իսկ ձևաբանությունը... ձևաբանությունը ևս չի բերում որևէ լուծում: Բայի սեռը, լինի ֆրանսերենում թե հայերենում, հարցը քննում է մակերես-սորեն և այստեղ էլ հանդիպում ես մի շարք անորոշ և անավարտ բնորոշում-ների: Թվում է, թե հարցը պետք է լուծվի հատկապես բերականական ալու շրջանակում: Սակայն ոչ մի արդյունք: Գուցե այն պատճառով, որ ոչ մի քե-րականություն չի տալիս դործողություն ուսումնասիրող լուրջ, ավարտված քննարկում: Ֆրանսերենում, և դա դարմանալի է մի լեզվի համար, որո հա-մարվում է ամենատրամաբանական լեզունեոից մեկը, անխուսափելիորեն հանդիպում ես բառերերի, որոնք ամենևին չեն համապատասխանում հրա-կանություն: Օրինակ, վերջիններ «passive» ածականը (voix passive, կոա-վորական սեռ). երբ պետք է ուսումնասիրել մի այնպիսի նախադասություն՝ Le professeur est respecté par les élèves (Ուսուցիչը աշակերտների կողմից հարգված է): Ի՞նչն է այստեղ պասիվ (ոչ եռանդուն)՝ ուսուցիչը, աշակերտները, թե՞ «հարգել» բայը: Հայերեն բառերը ավելի մոտ է բերա-կանական պրոցեսին (կրավորական սեռ), քանզի հավատարիմ է բուն քե-րականական մտածողությանը: Դրությունը ֆրանսերենում ավելի է բար-ղանում, երբ հասնում ես անցողական և անանցողական բայերին: Մի շարք դասադրեր բննարկում են այդ հարցը առանձին՝ վերադառնալով շարահյու-սությունը:

Հայ բերականագետների աշխատություններում դրությունը մոտավորա-պես նույնն է. «Սեռով,—գրում է Աբրահամյանը,—արտահայտվում են գոր-ծողություն, տուրբի հարաբերումները առարկաներին, մի կողմից դործողին, մյուս կողմից գործողության առարկային»⁷: Ահա վերջապես մի բնորոշում, մտածում ես, որ դնում է գործողությանը կենտրոնական դիրքում, և ակուն-կալում ես մի ամբողջական և մանրամասն ուսումնասիրություն: Ցավոք... Ոչ մի իոսք իոսող անձի տարբեր ստրատեգիաների մասին, դործող անձի տերի մասին՝ մտնել թի շմտնել գործողության մեջ, խոսել է չիոսել մյուս գործող անձանց մասին, որովհետև գործողությունը միմեայն գործող անձով և գործողությունը իր վրա կող անձով չի վերջանում: Պետք է նկա-տի առել մի շարք նրբորանգներ՝ գործողությանն օգնող անձի ներկայությունը (շատ դեպքերում գործող անձը հասնում է իր նպատակին՝ որևէ մեկի կամ առարկայի օգնությամբ), գործողությանը խանգարող անձը (հակառա-կորդը) և այն անձը, որի համար կատարվում է գործողությունը: Վեոհիշ-լալ անձանց շարքին, երկրորդ փուլում, կարելի է ավելացնել պարագաների տեղը, միջոցը, ժամանակը և այլն: Պարատները չեն մտնում շարահյուսու-թյան պարտադիր կաղմի մեջ: Մի խոսքով՝ սեռի ուսումնասիրման մեջ ին-չու չընդգրկել շարահյուսական կատեգորիաներ՝ մի ամբողջական տեսու-թյուն ստեղծելու համար: Բայց այդ դեպքում որտեղ են գտնվում սահման-

⁵ Հ. Պ. և տրոսյան, Մ. Գալստյան, Թ. Ղաթաղոսյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ 89:

⁶ Մանուկ Արեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 14:

⁷ Մ. Գ. Աբրահամյան, Նշվ. աշխ., էջ 132:

հետո՝ ձեռքարկության և շարահարկության միջոցով: Այս հողավածով մենք կուղենալինք մի նոր մոտեցում ներմուծել, ելնել մի իմաստաբանական կատեգորիայի, ինչպիսին է գործողությունը՝ իր սեփական օրենքներով, և կառուցել մի ամբողջական տեսություն, որն ի վիճակի կլինի վերադնել հակասություններ, տալ այն հիմք, որի վրա կարելի է ստեղծել վերահիշյալ հասկացությունը: Նվիրված մի նոր քերականություն:

Նախ, ի՞նչ է գործողությունը, ինչպե՞ս բնորոշել այն: Հասկանալի է, որ խոսքը լեռնով արտահայտված գործողության մասին է և ոչ՝ ողորդողության մասին: Դրանք տարբեր (սինթետիկական հարց): Նույնը կասեցնող գործողությունն է մասին՝ մի էակի (թե՛ հիմք է «էական», կառուց է պատասխանելու մեային հետմանը): Դրա մեջ միջոցով (լեզվային ներկայարարում) կատարում է ինչ-որ գործողություն: Գործողությունը, ուղեման, մի գործընթաց է (գործող անձը փոփոխություն է մտնում առարկաների դեմքի մեջ): Դրա պատճառ է հիմնված լինի ողորդ, մեկ համակարգող և ցանկացող էակի վրա: Իհարկե, այդ անձը երբեմն կենդանի էակ չէ, բայց դա արդեն ուսմանական երևույթ է, որի մասին կենսական հետք:

Այստեղ ակտը է անմիջապես տարրերի, գործողություն և կեցություն հասկացությունները: Գործողությունը և կեցությունը ներկայագրում են բնականաբան ողորդ պրոցեսի երկու երևույթ՝ գործողության մեջ կա մի ողորդողի էությունը: Դրանք տարբեր (սինթետիկական հարց): Դրա մեջ միջոցով (լեզվային ներկայարարում) կատարում է ինչ-որ գործողություն: Գործողությունը, ուղեման, մի գործընթաց է (գործող անձը փոփոխություն է մտնում առարկաների դեմքի մեջ): Դրա պատճառ է հիմնված լինի ողորդ, մեկ համակարգող և ցանկացող էակի վրա: Իհարկե, այդ անձը երբեմն կենդանի էակ չէ, բայց դա արդեն ուսմանական երևույթ է, որի մասին կենսական հետք:

Գործող անձի համար մենք կտալինք հետևյալ բնորոշումը՝ մի էակ, կենդանի կամ ոչ, որը ողորդողի մեջ խառնում է ողորդողի օրենքները: Դրա մեջ միջոցով (լեզվային ներկայարարում) կատարում է ինչ-որ գործողություն: Գործողությունը, ուղեման, մի գործընթաց է (գործող անձը փոփոխություն է մտնում առարկաների դեմքի մեջ): Դրա պատճառ է հիմնված լինի ողորդ, մեկ համակարգող և ցանկացող էակի վրա: Իհարկե, այդ անձը երբեմն կենդանի էակ չէ, բայց դա արդեն ուսմանական երևույթ է, որի մասին կենսական հետք:

Տեղ, ժամանակ (և մյուսները, բացի նպատակի և պատճառի պարզանքներից)

Պատճառ — — — գործող անձ — — — Պրոցես — — — կրող (գործողությունը) անձը — — — Հասցեատերը — — — նպատակ
օգնող անձ խանդարող անձ

Այս կառույցից ելնելով՝ կարելի է կառուցել զանազան գործողական դասակարգումներ, օպերացիաներ: Խոսող անձը կատարում է հետևյալ ընտրությունները՝

Ա) Նա հայտնում է իր տեսակետը: Այս բառը այստեղ պետք է վերցնել բառացի՝ տեսա-կետ (կետից սկսվող տեսադաշտը): Խոսող անձը զբաղեցնում է այն տեղը, որտեղից սկսած՝ նա մտադիր է ստեղծել իր նախադասությունը: Օրինակ՝ Շինվարչությունը կառուցում է նոր նախադասության մեջ խոսող անձը ընտրում է որպես տեսա-կետ գործող անձի տեղը (ենթակա՝ շինվարչություն):

Բ) Խոսող անձը կարող է վերցնել կամ չվերցնել մյուս անձանց (խընդիրները), ընտրել այս կամ այն անձին, այս կամ այն պարագան: Քննենք հետևյալ նախադասությունը՝ Այս տարի շինվարչությունը շատ է կառուցում: Տեսա-կետը նույնն է (շինվարչությունը), բայց խոսող անձը որոշել է չնշել գործողությունը կրող անձին (այստեղ ավելի ճիշտ կլիներ նշել անձ-առարկա բառը): Ստրատեգիան այն է, որ նա չի ցանկանում բացահայտել կառուցումները (ի՞նչ է կառուցում իսկապես շինվարչությունը): Թե ինչ!՝ համար, կարող է բացատրել միմյալ տեքստի վերլուծությունը: Իսկ Մի նոր նախադասություն կառուցվել նախադասության մեջ, տեսա-կետը գործողությունը իր վրա կրող անձ-առարկայի տեսա-կետն է: Այսպիսի տեսա-կետ կարելի է ստեղծել ուղեկից անձանց միջոցով ևս: Թե ի՞նչ դեր է կատարում շարահյուսությունը, այստեղ արդեն երկրորդական է, քանի որ Բնթակայի դիրքում կարող ենք գտնել տարբեր գործող անձանց: Ենթական ձևական հասկացություն է, և այն պետք է վերցնել բառի իմաստից անկախ: Ենթական, ուրեմն, նախադասության այն զիսավոր անդամն է, որով արտահայտվում է խոսող անձի տեսա-կետը:

Եթե հաշվի առնենք բոլոր հնարավոր դասակարգումները, ըստ տեսա-կետների և գործող անձանց դերերի, հնարավոր է տալ հետևյալ փոփոխավորությունները (կոնֆիգուրացիաները)՝

1. Գործող անձի տեսա-կետը: Այստեղ հարկավոր է նկատի առնել մի շտրք տարրերակա՝ հի՛

Ա) Գործողությունը կրող անձի-առարկայի բացակայությունը: Արդեն քննարկեցինք մեկ օրինակ: Այժմ նշենք, որ ընդհանրապես կրող անձի բացակայությունը գործողությանը հաղորդում է ինտենսիվություն, ամբողջականություն և հագեցվածություն: Դա կապված է ոճի հետ: Որինակի համար, նա ծխում է մի սիգարետ և նա ծխում է՝ երկրորդ օրինակը շեշտը գնում է նա-ի ծխող լինելու վրա, իսկ անձը, որ ծխում է մի սիգարետ, կարող է ընդհանրապես կյանքում ծխող չլինել:

Բ) Կրկնասեռը, երբ գործող անձը նույնն է, ինչ որ կրող անձը՝ Պետությանը սավորվում է: Տրամաբանորեն երկու սեռերը նույն պլանի վրա չեն՝ գործող անձը ակտիվ է, և խոսող անձը վերցնում է նրա տեսա-կետը: «Պետք է նշել, — գրում է Աբրահամյանը կրկնասեռի մասին, — ուր բայի սեռերի ձևավային հակադրությունը սրանով չի սահմանափակվում, և ձևային հակադրությունը ոչ միշտ է հնարավոր դարձնում սեռերի աստիճանումը»⁸:

Գ) Երբ կրող անձը կենդանի էակ չէ (խնդիրները միշտ չէ, որ ներկայացնում են կենդանի էակ): Սա ամենատարածված դեպքերից է, և կղերական է, անդրադառնալ հատկապես մյուս դեպքերին: Նշենք, որ գործող անձն էլ կարող է կենդանի էակ չլինել: Դա, ինչպես ասեցինք, կապված է ոճական երևույթների հետ և արտահայտում է դինամիզմ՝ իր անտրոպոմորֆ մոտեցումով: Արևը վառում է սարերը նախադասությունը պատկանում է արդեն պոեզիային (պոռոպոպիա): Իսկ Ուղտերի մի երկայն շարժումը բարձ-

բանում էր Բավախից ղեկայի ավագնու լեռները նախադասության մեջ խոսող անձը վերցնում է «շարքը» բառը ուղտերի տեղ և այսպիսով ստեղծում սխեմակոթիսա:

2. Գործողությունը կրող անձի տեսակետը: «Հատկանիշ» հասկացությունը այստեղ դանում է իր իրական տեղը: Բայց, ըստ երևույթին, պետք է սարբերել ներկու տեսակետ (երկու կրավորական սեռ):

Ա) խոսող անձը շեշտը դնում է ղործողության վրա: Տեսակետը ներքին է՝ Ամերիկյան հայտնաբերվել է 1492 թ.:

Բ) խոսող անձը շեշտը դնում է տրդյունքի վրա: Տեսակետը արտաքին է՝ Տունը վերջապես կառուցվել է:

Հինգհանրապետ, այս տեսակետը օղտագործվում է հաշվետվությունների, բնորոշումների մեջ՝ Առաքելա անվասող բառը կոչվում է գոյակա: Ինչպես տեսնում ենք, գործողությունը կրող անձը կարող է ենթակա լինել, պարպակա՝ այն պատճառով, որ տեսակետը նրան է, ղործողությունը նայվում է իր աչքերով:

Մնում է ավելացնել ես մի նրբերանգ՝ կրող անձի տեսակետը փորձում է թաքցնել գործող անձի գոյությունը՝ Շենքեր Բանդվել է նախադասության մեջ, խոսող անձը գաղտնի է պահում բանդող անձի գոյությունը:

Գ. Ջահուկյանը, հիմնվելով վաթսուներկան թվականների ստորուկտուրալիզմի սկզբունքների վրա, խոսում է բայի «արժույթի» մասին, այսինքն, բայի կապակցելիությունը ենթակայի, խնդիրների և պարագայի հետ... Ըստ բայի հետ կապվող տարբեր բնույթի միավորների բանակի՝ կարելի է տարբերել բայի զրո արժույթից մինչև մի բանի արժույթ, և ըստ այսմ, առանձնացնել զրո արժույթ, մի արժույթ, երկարժույթ, եռարժույթ բայեր և այլն⁹: Մովր ալեկոծվում է նախադասության մեջ Ջահուկյանը տեսնում է միարժույթ բայ: Ձևական բերականության սահմաններում այս մոտեցումը ճիշտ է, բայց այն անտեսում է խոսող անձին: Արժույթը ոչ թե բայի մեջ է, այլ խոսող անձի ստրատեգիաների մեջ: Մովր ալեկոծվում է նախադասության մեջ խոսող անձը չի նշում իրական գործող անձին (բամին): «Միարժույթ» հասկացությունը այստեղ առանց բացատրության է թողնում այս կառուցվածքի իսկական պատճառը:

3. Ողնող անձի տեսակետը: Հիշեցնենք, որ այստեղ էլ օգնող անձը կարող է կենդանի էակ չլինել: Օգնող անձի տեսակետով՝ գործող անձը ընդհանրապես ղեղչվում է: Նրա տեղը զրավում է օգնող անձը: Օրինակ, վերցնենք հետևյալ նախադասությունը՝ Այս բանալին ղուտը վատ է բացում: Հասկանալի է, որ այստեղ գործող անձը բանալին չէ, բայց, ինչպես պարզեցինք, դա կապված է խոսող անձի նախասիրությունների հետ: Այս նույն նախադասության մեջ կարելի է վերականգնել գործող անձի դիրքը՝ Այս բանալիով նա ղուտը ղովարությամբ է բացում: Ենթակայից «բանալի» բառը անցնում է միջոցի պարագային:

Հայերենում այս տեսակետը հրեմն բննարկվում է շեղոք սեռի մեջ:

4. Պրոցեսի տեսակետը: Այսինքն, ոչ տեսակետ կամ՝ ոչ մեկի տեսակետ: Պրոցեսը տեղի է ունենում ինքն իրեն: Բոլոր անդամ նախադասությունները կամ անենթակա նախադասությունները պատկանում են այս տեսակետին:

«Անդամ կոչվում է այն միտկագմ նախադասությունը, որը չուի բերականական ղեմք»¹⁰: Ինչպես հայտնի է, կան բայական տեղեմ նախադասու-

9 Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե., 1974, էջ 466—467:

10 Ս. Գ. Արախանյան, նշվ. աշխ., էջ 330:

թյուններ (գլխավոր անդամը արտահայտվում է բայով) և անվանական ան-
չևս նախադասություններ (գլխավոր անդամն արտահայտվում է սևունով):
Իսկ անորոշ ձևը (անորոշ դերբայ) և անունը (գոյական), իհարկե, շատ մոտ
կատեգորիաներ են, բայց սեզ թվում է, որ կան էական տարբերություններ՝
բայի անորոշ ձևը (դերբայը) տալիս է գործողության, եղանակի և ժամանա-
կի գրո առարկա, իսկ անունը այլևս գործողության հետ կապ չունի: Ան-
վանական նախադասության մեջ բայը, հատկապես, զեղչված է: Համեմա-
տենք նախադասությունները՝ Գրչեք և Լոն: «Գրչեք» գոյա-
կանը, որպես ենթակա, միաժամանակ վերցնում է ստորոգյալի դերքը, ա-
վելի ձիշտ՝ ստորոգյալը (բայը) երևան չի եկել, խոսող անձը տալիս է մի
ապագորություն: Ենթակայի մասին խոսելը այստեղ իմաստ չունի՝ նախա-
դասության անդամները դեռ երևան չեն եկել: Լոն բայական անդամ նախա-
դասության մեջ, այսպես ասած բայն է իր մեջ հավաքել նախադասության
մյուս անդամների գործառնությունները, բայց այս անգամ կարող ենք խոսել
ապագորություն-գործողության մասին: Առաջին դեպքում, ուրեմն՝ մոտ ենք
կեցություն ցույց տվող բայերին, իսկ երկրորդում՝ գործողության: Երկու
դեպքում էլ դեռ չեն հաստատվել գործող անձինք և կրող անձինք:

Այս անսակետի մեջ են մտնում նաև այսպես կոչված անենթակա նա-
խադասությունները: Իհարկե, տրամաբանորեն չի կարելի խոսել անենթա-
կա նախադասության մասին, եթե վերցնենք Սթենլ է նախադասությունը:
Այստեղ կա դեմք, և այդ դեմքը քերականական դեմքն է՝ «է» օժանդակ բա-
յը. դա երրորդ դեմքն է՝ «նա», բայց մթնոլորտային երևույթների դեմքում
գործող անձը անճանաչելի է: Ֆրանսիացի քերականագետ Ժերար Մուան-
յեն խոսում է (Systematique de la langue française, Paris, 1980). «տիեզե-
րական դեմքն» մասին: Բայց նախընտրելի է խոսել պրոցեսի տեսակետի
մասին:

Այս ձևակերպման վրա կարելի է կառուցել այնպեսի նախադասություն-
ներ, ինչպիսին են ֆրանսերենի անդամ նախադասությունները՝ *Il est arrive*
un triste evenement (Մի դժբախտ պատահար է տեղի ունեցել): Հայե-
րենում, ինչպես նկատում ենք, նախադասությունը այլևս անդամ չէ. թվում է,
կա գործող անձ (պատահարը), և դա վերաբերում է ներգործական սեռին:
Իսկ պատահարը չի կարող լինել գործող անձ, գործող անձինք այստեղ
պարզապես չեն արտահայտված:

Իսկ հայերենի չեզոք սեռը. մի՞թե չի կարելի այն ընդգրկել այս տեսա-
կետի մեջ, քանզի, ինչպես նշում է Աբրահամյանը, «չեզոք սեռի բայերը
ցույց են տալիս ինքնին կատարվող գործողություն, որն ուղղակիորեն չի
անցնում մի այլ առարկայի (քերականորեն ուղիղ խնդիր), և գործողությու-
նը կատարողը հանդես է դալիս որպես այդպիսին (քերականական ենթա-
կա)»¹¹: Իսթեն կատարվող գործողությունը «հիշեցնում է մեր բնորոշումը՝
«պրոցեսը տեղի է ունենում ինքն իրեն»: Սակայն Աբրահամյանի օրինակ-
ներից ոչ մեկը չի համապատասխանում վերոհիշյալ բնորոշմանը, ինչպես
և լրիվ չեն համապատասխանում հեղինակի բերած բնորոշմանը՝

Բակը մտավ մի զառամյալ ծերունի:

Գիշերվա մի ժամին Բաղամյանը զարթնեց անկողնում:

Մասրենու թփի մոտ կանգնած աղջկա շրջագոգեստը փայլում էր:

Այս երեք գործողություններից ոչ մեկը չի կատարվում իսկապես ինք-
նին, նույնիսկ երրորդ նախադասության մեջ, որտեղ կա իրական գործող
անձ (յուսը): Եվ ոչ միայն դա. մեկ ուրիշ հարց է ծագում՝ որտե՞ղ է իս-
կապես չեզոք սեռը, ի՞նչն է այստեղ չեզոք: Կան անանցողական բայեր: Զե-
զոք սեռը պարզապես դառնում է մի ապաստան, որտեղ տեղավորում են

այն լուրոր բայերը, որոնք շին մանում կրավորական և ներգործական սեռերի մեջ: Ի միջի այլոց, երկրորդ նախադասությունը ֆրանսերեն կթարգմանենք հետեյալ կերպ՝ A une certaine heure de la nuit, Badamian s'est réveillé dans son lit. Բարձրամակությունը տալիս է կրկնասեռ (voix pronominale), կատարող անձը (Badamian) և կրող անձը (se). այսինքն, նույն Բադամյանը: մա պարզապես պատկանում է գործող անձի տեսակետին: Այսպիսով, կարելի է խուսափել այն հակասություններից, որոնց հանդիպում է Ս. Աբրահամյանը: Վերցնենք, հենց հանդիպել բայը, որը քերականագետը դասում է շեզոք սեռի մեջ՝ նշելով, համեմատյալ դեպք, որ այդ բայը կարող է պատկանել ներգործական սեռին ևս (հանդիպել մեկին, մի բանի): Մեր բնորոշման մեջ այս կապով է լինել աշտուղական կամ անանցողական, դա արդեն երկրորդական է: Միևուրբ տեսակետն է, և սա չի թուլատրում որևէ երկրամասություն: Այս վերջին տեսակետին մոտ ևն (պրոցեսի տեսակետը) այն նախադասությունն է, որոնցում խոսուղ անձը փորձում է շանվանել գործող անձին: Տրամաբանորեն այս կառուցվածքները պատկանում են գործող անձի տեսակետին, բայց այն պատճառով, որ խոսող անձը հեռացնում է գործող (կատարող) անձին իր դերից, չի ջանկանում անվանել նրան, կարելի է այն ընդգրկել տրոցեսի տեսակետի մեջ: Վերցնենք՝ Այս տարի բենգիներ նորից քաշվազել են նախադասությունը: Խոսող անձը չի ասում թե ո՞վ է թանկացրել (թեև մենք հասկանում ենք): Դուրս է դալիս, որ զենքը ինքնին թանկանում ևն՝ գործող անձի տեսակետից մենք անցնում ենք պրոցեսի տեսակետին:

5. Խանգարող անձի ((հակառակորդի) տեսակետը: Դժվարությունն այստեղ այն է, որ խանգարող անձի տեսակետը շատ մոտ է գործող անձի տեսակետին, կարելի է դրանք շփոթել: Վերցնենք հետևյալ օրինակը՝ Պրաֆեսորը նախկադրեց Պրաֆեսորին վերանայել իր աշխատանքը: Եթե չլիներ բառի սեմանտիկան, այս կառուցվածքը կմտներ գործող անձի տեսակետի մեջ: Ի միջի այլոց, կարելի է վերադառնալ գործող անձի տեսակետին, վերականգնելով «պրոֆեսոր» անդամը իր պատճառի պարագայի դիրքում՝ Պրաֆեսոր վերանայեց իր աշխատանքը՝ պրոֆեսորի պատկառով:

Այս դեպքում ևս մի հարց է ծագում. կարելի է արդյոք պատճառը համարել պարագա: Մենք կվերադառնանք այս հարցին, երբ կանցնենք պարագաների վերլուծությանը:

6. Հասցեագրի անա-կետը: Պատկերը այստեղ նույնն է: Պետրոսը նամակ նվարկեց պրոֆեսորին նախադասությունը, որտեղ «պրոֆեսոր» անդամը խնդիր է, կարելի է կառուցել այնպես, որ տեսակետը փոխվի: Պրաֆեսորը նամակ ստացավ Պետրոսից. խնդիրը այստեղ զբաղեցնում է հեթանոսական դիրքը, տեսակետը, որ հասցեագրի տեսակետն է:

Ավելի պարզ լինելու համար կասեինք, որ հարմար է այս երկու տեսակետները (խանգարող անձը, հասցեագրը) ընդգրկել գործող անձի տեսակետի մեջ: Ինչպես կտեսնենք, պարագաները շին կարող տեսակետ դառնալ:

7. Տեսակետի ընդգծումը: Տարբեր շարահյուսական միջոցներով կարելի է շեշտը դնել այս կամ այն տեսակետի վրա: Օրինակ՝ Այդ նա էլ ասել (գործող անձի ընդգծում):

8. Պարագաներ: Պարագաները այն շրջանակն են, որի մեջ կատարվում է գործողությունը և որի մեջ մտնում են տարբեր դիրքերում գործող անձինք: Մի շարք քերականագետների պարագաները համարում են գործող անձինք կամ էլ հոլովներ՝ համադրական լեզուներում: Ֆրանսերեն circumstancel բառերը այստեղ ավելի գործնական է: Այն գալիս է լատիներենից՝ circum stare-ից (կանգնել շուրջը): Ընդհանրապես, պարագան, եթե իսկապես պարագա է, կարելի է հանել կամ տեղափոխել: Կան պարագաներ, որոնք համարվում են պարագա, բայց իսկական պարագաները չեն: Մ. Ա.

սատրյանը տալիս է հետևյալ օրինակը՝ Գալից փախավ, արջի նաճկն ընկավ, որտեղ «ճանկն» բառը նա համարում է տեղի պարադոքս¹²։ Իբր փորձում են հանել «ճանկն» բառը, նախադասությունը կորցնում է իր իմաստը։ Մ. Ասատրյանի բերած մի այլ նախադասություն մեջ, ինչպիսին է. Նզուհե Վասուդուր հանգստացում էր ծովափին, կարող ես առանց դժվարության հանել «ծովափին» բառը, նախադասությունը պահում է իր իմաստը։ Եվս մի օրինակ՝ Ամառները գնում ենք նամբար¹³, եթե հեռացնենք «նամբար» բառը, նախադասությունը մնում է անավարտ։ Դա նշանակում է, որ «նամբար» բառը բայի տիրույթներում է, և չպետք է այն համարել պարագու։

Հստ իր էության, ուրեմն, պարադոքս չի կարող դառնալ տեսակետ, նա մնում է գործողությունից դուրս և անկարելի է նրան համարել գործող անձ։

Եվս մի խոսք կեցություն ցույց տվող բայերի մասին։ Ինչպես նշեցինք, այս բայերը կախված չեն որևէ գործող անձից։ Դրանք ցույց են տալիս դրություն, նույնիսկ այն ժամանակ, երբ կապված են ինչ-որ պատճառի հետ։ Կարելի է տարբերել երկու տեսակի կեցության բայեր՝

Ա) Ոչ կենդանի էակի գործողության նկարագրումը՝ Օջախը ծխում է։

Բ) Կենդանի էակի գործունեության նկարագրումը՝ Պետրոսը բնում է։

Այս երկու բայերը կախված չեն որևէ գործող անձից։ Գուցե և այս բայերը ի նկատի ունի Մ. Աբրահամյանը, երբ խոսում է շեղոր սևոի բայերի մասին։ Գիշերվա մի ժամին Բաղամյանը զարթնեց անկողնում։ Ինչպես ուսումնասիրել սուտեղ զարթնեց բայը։ «Զարթնել» գործողությունը կախված է «Բաղամյան» ենթակայից, թե ոչ։

Ինչպես տեսանք, ոչ շարահյուսությունը, ոչ ձևաբանությունը անկարող են բացատրել այնպիսի երևույթներ, որոնք ուղղակիորեն կապված են խոսող անձի սեռականների հետ։ Ենթականները տարբեր են, քանզի նրանք, այսպես ասած, ձևական «ծրարներ» են, որոնք ստանում են տարբեր պարունակություններ, Դա, իհարկե, չի նշանակում, որ պետք է արհամարհել ձևական քերականությունը. այդ դեպքում մենք թույլ կտայինք մեկ ուրիշ սխալ, գուցե ավելի վտանգավոր, քան ստրուկտուրալիզմի սխալները։ Պարզապես, եկել է ժամանակը, երբ պետք է դասագրքերի մեջ տեղ տալ խոսող անձին։ Ոչ մի քերականական հարց չի կարող իր լուծումը դնել առանց խոսող անձի գոյության։

ДЕЙСТВИЕ И АКТАНТЫ

(сравнительное исследование)

М. А. ПОЛАДЯН

Р е з ю м с

Проблемы, связанные с категорией «подлежащее», рассматриваются в двух грамматических областях: морфология и синтаксис.

Наблюдается ряд случаев (методологических подходов), в которых имеются несоответствия между определением и конкретными проявлениями подлежащего. Это обстоятельство объясняется тем, что авторы рассматриваемых учебников не выходят за рамки формальной грамматики. Во избежание этих противоречий следует обращаться к прагматике, т. е. к разным стратегиям говорящего.

¹² Մ. Ե. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 248։

¹³ Տե՛ս Գ ո լ ը գ ի ն Ս և ա կ , Հայոց լեզվի շարահյուսություն, Ե., 1960, էջ 61։